

Դիտորդներ. ազգային «ավանդույթները» պահպանվել են տեղական ընտրություններում



Ֆոտոլուր

ԳԱՅԱՆԵ ՄԿՐՏՅԱՆ

«ԱրմենիաՆաուի» թղթակից

Անցյալ շաբաթավերջին Հայաստանի 33 համայնքներում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) ընտրություններում հերթական անգամ գրանցվել են թերացումներ և խախտումներ, ինչի մասին փաստում են ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն իրականացրած դիտորդները:

Դիտորդական առաքելություն իրականացրած «Թրանսփարենսի ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի ընտրական ծրագրերի համակարգող Լենա Նազարյանը նշում է, որ արձանագրվել են «բազմաթիվ խախտումներ», որոնք բնորոշ են հայաստանյան իրականությանը:

«ՏԻՄ ընտրություններում կային սովորական և ավանդական դարձած կուտակումներ տեղամասերում, ուղղորդումներ, կողմնակի անձանց ներկայություն: Մենք արձանագրել ենք բազմաթիվ խախտումներ», - ասում է Նազարյանը:

«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ անդամ Տիգրան Եգորյանի դիտարկմամբ էլ՝ գրանցվել են բազմակի քվեարկության դեպքեր, կամ երբ փորձել են քվեարկել մեկ ուրիշ անձի փոխարեն:

«Արձանագրվել է դեպք, որ քաղաքացուն տրվել է միանգամից 3 քվեաթերթիկ: Դեպքը բացահայտել և կանխել են դիտորդները: Մենք չենք կարող ասել, որ խախտումները եղել են համատարած, սակայն չենք էլ կարող պնդել, որ դրանք չեն կրել համատարած բնույթ, - ասում է Եգորյանը: - Ի տարբերություն «ավանդական» խախտումների՝ այս անգամ ՏԻՄ ընտրություններում մասնակցությունը ցանկալի տոկոսի չէր հասնում: Ընտրությունները ոչ մրցակցային էին, քանի որ բազմաթիվ

համայնքներում մեկ թեկնածու էր առաջադրված, ինչը լուրջ և համազգային խնդիր է»:

Ընտրություններում մարդկանց ցածր մասնակցությունը, ըստ ԿԸՀ անդամ Նունե Հովհաննիսյանի՝ ընտրական համակարգի խնդիրը չէ: Անդրադառնալով ընտրություններում դիտորդների նշած խախտումներին՝ նա ընդունում է, որ դրանք իսկապես տեղի են ունեցել: ԿԸՀ է ներկայացվել 6 դիմում:

«Դիմումները կքննվեն համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում: Նշեմ, որ, այո՛, դիմումներում բարձրացված խախտումները, ցավոք, եղել են: ԿԸՀ և ընտրատարածքային հանձնաժողովները դրանց մասին տեղեկացվել են», - ասում է Հովհաննիսյանը:

Այս ընտրություններում միայն երկու համայնքում ՀՀԿ-ից բացի նաև ընդդիմադիր թեկնածուներ են մասնակցել: Այլ քաղաքական ուժեր չեն առաջադրել իրենց թեկնածուներին՝ վկայակոչելով համապատասխան ռեսուրսների բացակայությունը և ընտրական գործընթացի նկատմամբ թերահավատությանը՝ որպես հետևանք ընտրողներին զրկելով այլընտրանքային թեկնածուի օգտին քվեարկելու հնարավորությունից:

Երևանի ավագանու «Բարև, Երևան» խմբակցության ղեկավար Անահիտ Բախշյանը նշում է. ընդդիմությունը չի մասնակցում ընտրություններին, քանի որ իրականում զրկված է իրավիճակը փոխելու ռեալ հնարավորություններից, իշխանությունն էլ, վարչական ռեսուրս գործադրելով, ամլացրել է քաղաքական դաշտը:

«Մա առաջին հերթին իշխանությանն է վնասում: Իշխանություններն էլ գիտեն, որ իրենցից հոգնել են, չեն ուզում իրենց:

Ընդդիմությունն էլ չունի համապատասխան ռեսուրսներ ընտրություններին ակտիվ մասնակցելու համար», - ասում է Բախշյանը՝ նշելով, որ ընդդիմության համար անգամ դժվար է դարձել գրասենյակներ բացել համայնքներում:

Նրա խոսքով՝ իշխանության քայլերը, որոնք հասարակության շրջանում հիասթափություն են առաջացնում քաղաքական համակարգի նկատմամբ ընդհանրապես, վնասում են հենց երկրի ղեկավարությանը:

«Գործընթացներում հասարակությանը ներգրավելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու փոխարեն ջարդում ու տրորում են:

Մեզ նոր մթնոլորտ է պետք, համագործակցող, այլ ոչ թե վանող, սադրիչ, ինչպիսին այսօր իշխանությունն է», - ասում է նա:

ՀՀԿ խմբակցության անդամ Լեոնիկ Ալեքսանյանի կարծիքով էլ՝ ՏԻՄ

ընտրությունների համար պետք չեն մեծ ռեսուրսներ, ընդդիմությունը մեծ ռեսուրսներ է օգտագործում, երբ մասնակցում է համապետական ընտրություններին:

«Իշխանափոխությունը սկսվում է հենց ՏԻՄ ընտրություններին մասնակցելուց, այսինքն՝ ներքևից: Եթե անգամ կուսակցությունը չհաղթի ընտրություններում, դա ևս մեկ առիթ է բնակիչների հետ հանդիպումների միջոցով ներկայացնել սեփական կուսակցության քաղաքական գիծը», - ասում է նա:

Հոդվածի հղումն այստեղ՝

http://www.armenianow.com/hy/news/politics/61510/armenia_local_elections_government_opposition